

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցած ԳՊՄԻ-ի ֆիզմաթ ֆակուլտետի

ֆակուլտետային խորհրդի թիվ 4 նիստի

Նախագահ՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

Ֆակուլտետային խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան

Նիստին մասնակցում էին ֆակուլտետային խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1. Հեռակա համակարգի ուսանողների փոխադրական քննարկում:
2. Հեռակա համակարգի ուսանողների ուսանողական նպաստի մասնակի փոխհատուցման քննարկում

Զեկուցող՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

1. **Լսեցին**- Մ. Մարգարյանի հաղորդումը հեռակա համակարգի ուսանողների փոխադրականի մասին:

Արտահայտվեցին- Մ. Մարգարյանը, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

Մ. Մարգարյանը ներկայացրեց ռեկտորատի որոշումը, որի համաձայն հեռակա համակարգի լիկվիդացիոն շրջանը երկարացվում է մինչև 2014 թ-ի դեկտեմբերի 27-ը:

Որոշեցին- Հեռակա համակարգի լիկվիդացիոն շրջանը երկարացնել մինչև 2014 թ-ի դեկտեմբերի 27-ը:

2. Լսեցին- Մ. Մարգարյանի հաղորդումը հեռակա համակարգի ուսանողների ուսանողական նպաստի մասնակի փոխհատուցման մասին :

Արտահայտվեցին- Մ. Մարգարյանը պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

Մ. Մարգարյանը ներկայացրեց , որ հեռակա համակարգի 34 ուսանողներ ներկայացրել են ուսանողական նպաստի մասնակի փոխհատուցման դիմումներ:

Որոշեցին- Հեռակա համակարգի ուսանողների կողմից ներկայացված ուսանողական նպաստի մասնակի փոխհատուցման դիմումները ներկայացնել և քննարկել ֆակուլտետի և ինստիտուտի մանդատային հանձնաժողովներում:

Ֆիզմաթ ֆակուլտետային

խորհրդի նախագահ՝

Մ. Մարգարյան

Ֆիզմաթ ֆակուլտետային

խորհրդի քարտուղար՝

Ա. Սահակյան

28.11.2014թ.